ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2014 թվականի թիվ 3-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի <դ> ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 07/6693-13- ի գրությունը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի /ծածկագիր՝ 70-3.1-12/ գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Հովհաննես Չոբանյանի հետ 2014թ. հունվարի 10-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքով թափուր պաշտոնը զբաղեցնելը:

2.<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /2.52/ կիրառմամբ՝ 100.800 /հարյուր հազար ութ հարյուր / դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2014թ.հունվարի 10
ք.Իջևան